ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Մանրիկյան.**

Ի պատասխան Ձեր 21.02.2020թ. հ.077 գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետի 2015 թվականի հունիսի 4-ի հ.1704-Ա որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչությունն իրականացնում է Երևան քաղաքում ներդրումային քաղաքականության մշակման աշխատանքներ: Վերոնշյալ ոլորտի շրջանակներում վարչության կողմից իրականացվում են հնարավոր ներդրողի ցանկությամբ հանդիպում-քննարկումներ: Հանդիպումների ընթացքում տրվում են անհրաժեշտ բոլոր պատասխանները: Իրականացվում են ներդրումային ծրագրերի ուսումնասիրման աշխատանքներ: Մշակվում են նաև Երևանի քաղաքային տնտեսության համար գրավիչ նոր ներդրումային առաջարկներ: Մայրաքաղաքի ներդրումային գրավչության բարձրացման և օտարերկրյա գործընկերներին ու հայաստանյան գործարար հատվածին իրազեկելու նպատակով իրականացվում են Երևանի տնտեսության և ներդրումային հնարավորությունների մասին տեղեկատվական նյութերի պատրաստման և տարածման աշխատանքներ: Վարչությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի համար հետաքրքրություն ներկայացնող՝ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների նախագծերին մասնակցությունը, ինչպես նաև հանդես է գալիս համատեղ հետաքրքրություն ներկայացնող ծրագրերով՝ ներգրավելով միջազգային դոնոր կազմակերպություններ:

Երևանի քաղաքապետարանը չի իրականացնում ներդրողների քանակի հաշվարկ, ովքեր կատարում են ներդրում Երևան քաղաքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ